

**7.6. Վիճակագրական տեղեկատվության տարածումը ՀՀ ԱՎԾ  
ինտերնետային էջի միջոցով և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի գործունեությունը**

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի կատարելագործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: 1999թ.-ից գործող ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջին վիճակագրական տեղեկատվություն սպառողները դիմել են մոտ 128000 անգամ, միայն 2004թ. ընթացքում ինտերնետի ՀՀ ԱՎԾ հանգույց են այցելել 41000 անգամ, որը մոտ 14 %-ով ավելի է 2003թ. համապատասխան ցուցանիշից:

Ներկայումս Ինտերնետի միջոցով հասանելի է նաև ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի էլեկտրոնային համացանկը, որը թարմացվում է գրադարանի նոր գրականությամբ համալրմանը զուգընթաց:

Աշխատանքներ են տարվել կորպորատիվ ցանցի միջոցով ՀՀ ԱՎԾ ինտերնետային [www.armstat.am](http://www.armstat.am) էջը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներին (մարզային գործակալություններին) հասանելի դարձնելու ուղղությամբ:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2004թ. տարեվերջին առկա է եղել 6791 միավոր վիճակագրական գրականություն (2003թ.՝ 6100 միավորի դիմաց), նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 111.3%:

Վիճակագրական գրականությունը 2004թ.-ին համալրվել է աշխարհի տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից ստացված (ՄԱԿ, ԱՄՀ, Համաշխարհային Բանկ, Եվրոստատ, ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեի և այլն), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին: 2004թ. ՀՀ ԱՎԾ հրապարակած վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր և վիճակագրական զեկույցներ) 2-ական օրինակներ տեղադրվել են գրադարանում:

ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում այցելուների գրանցումը սկսվել է 2002թ. մայիսից: Ըստ գրանցամատյանի տվյալների, 2004թ.-ին ծառայություն է մատուցվել 971 այցելուի (գիտական մարմիններից (30%), կրթական ոլորտից, մասնավորապես՝ դասախոսական անձնակազմ, ուսանողներ և ասպիրանտներ (45%), պետական մարմինների (8%), լրատվամիջոցների ներկայացուցիչներ (4.5%), միջազգային կազմակերպություններ (5%), քաղաքացիներ (7.5%) և այլն):

---

<sup>23</sup> Տես՝ Ծրագիր, Հավելված III: